ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» նոյեմբերի 2011թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայական) Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցը նվիրել Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հ.3 բնակարանի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.08.2011թ. հ.2844885 վկայական) սեփականատեր Արթուր Ենգիբարյանին՝ իր կողմից օգտագործվող մակերեսին համապատասխան:

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի <<Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին>> N 252-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 7-րդ կետի 3-րդ սյունակից հանել «Սեդրակ Բրոյան» բառերը,

2) Հավելվածի 7-րդ կետի 4-րդ սյունակում «26.12.2005թ. հ.2090978» թվերը փոխարինել «28.09.2011թ. հ.2845463» թվերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ա. Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից «Տաթև ԿՔՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է կցակառույցի շինարարություն՝ շենքի սեփականատերերի միջոցների հաշվին: Երևանի քաղաքապետի 2007թ. նոյեմբերի 29-ի հ.5184-Ա որոշմամբ թողարկվել է նշված հասցեում գտնվող կցակառույցի զբաղեցրած հողամասի հ.7688-2007 գլխավոր հատակագիծը և կցակառույցի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայականը):

Ա. Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից կցակառույցն իրականացվել է շենքի սեփականատերերի միջոցների հաշվին, փաստացի օգտագործվում և տիրապետվում է նրանց կողմից:

Երևան քաղաքի ավագանու 24.06.2011թ. հ.252-Ա և 19.07.2011թ. հ.274-Ա որոշումներով Երևանի քաղաքապետին թույլատրվել է Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցները նվիրել շենքի թվով 25 բնակարանների սեփականատերերին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսներին համապատասխան:

Քաղաքացի Արթուր Ենգիբարյանը ևս հանդիսանում է վերը նշված շենքի սեփականատեր (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.08.2011թ. հ.2844885 վկայական) և 20.09.2011թ.-ին դիմել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան՝ իր կողմից օգտագործվող կցակառույցը սահմանված կարգով իրեն օտարելու խնդրանքով:

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի <<Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին>> N252-Ա որոշմամբ թույլատրվել է Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայական) Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցները նվիրել հավելվածում նշված քաղաքացիներին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսին համապատասխան:

Երևան քաղաքի ավագանու որոշումն ընդունվել է Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում բնակվող սեփականատերերի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա։ Ա. Տիգրանյան փողոցի հ.38 շենքի հ.12 բնակարանի սեփականատերերի կողմից ներկայացվել է 26.12.2005թ. տրված հ.2090978 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, որտեղ որպես սեփականատեր նշված է եղել նաև 04.06.2006 թվականին մահացած Սեդրակ Բրոյանի անունը։

Ներկայումս քաղաքացիների կողմից ներկայացվել է Սեդրակ Բրոյանի մահվան 05.06.2006թ. հ.058870 վկայականը և վերը նշված հասցեի բնակարանի 28.09.2011թ. տրված հ.2845463 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման նոր վկայականը։

«Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է պայմանավորված է նշված հարցերի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ